Պետրոս Մեծը մեծ եռանդով ոյժ տուեց Օրիի գործունէութեան։

Նման մի ծրագիր փորձեց իրականացնել Ե'ւ Եկատերինա Բ. կայսրուհին՝ ծրագրելով հայկական թագաւորութեան ստեղծումը։ Հայաստանի գահի թեկնածու էր իշխ. Պոտեմկինը եւ... նոյնիսկ ապագայ հայկական թագաւորի սեղանի անօթներն էին ապսպրուած։

Վերջապէս, նման միտք էր ղեկավարում քաղաքական գործիչներին եւ վերջին, համաշխարհային պատերազմի ընթացքին, երբ մշակւում էին ընդարձակ ծրագիրներ հայկական պետութեան, որը պէտք է Փոքր Ասիան բաժանէր երկու մասի. եւ Թիւրքիան զատէր մնացած մահմեդական աշխարհից։

## VI

## ԼՎՈՎԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԿԱԶՄԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Լվով քաղաքի վարչութեան գլուխ կանգնած էր վոյթը, որ սկզբում նշանակւում էր լեհական թագաւորի կողմից։ ԺԵ. դարի առաջին կիսին Վլադիսլաւ թագաւորը իր իրաւունքը զիջեց քաղաքային վարչութեան — rada, որին անցաւ վոյթ ընտրելու իրաւունքը։

Քաղաքային վարչութիւնը՝ rada-ն, բաղկացած էր 12 անդամից (consules), որոնք ընտրւում էին ցմահ։ Նրանք բաժանւում էին երկու խմբի՝ վեցական հոգի։ Մի տարի գործում էր մէկ խումբը (consules residentes), իսկ միւսը (antiqui) հանգստանում էր։ Յաջորդ տարի antiqui դառնում էին residentes, իսկ residentes հանգստանում էին։

Նրանք էլ իրենց միջից ընտրում էին երեք քաղաքապետներ (bourgmeister), որոնք պաշտօնավարում էին հերթով, իւրաքանչիւրը մէկ ամիս, եւ քաղաքային գործերի բարձրագոյն իշխանութիւնն էին հանդիսանում։

Քաղաքային վարչութիւնից յետոյ գալիս էր collegium scabinale, որ բաղկացած էր 12 scabin-ներից, որոնց ղեկավարում էր վոյթը՝ ընտրուած ռադայի կամ scabin-ների միջից մի տարի ժամանակով։ Scabin-ները ունէին դատական իրաւասութիւններ. նրանք կազմում էին քաղաքային դատարանը։

Այս երկու հիմնարկութիւններն էլ՝ կազմուած ցմահ ընտրուած անդամներից՝ շատ չուտով վերացուեցին հակակշռի չենթարկուող մի սակաւաապետութեան, որովհետեւ վարչութիւնն էլ, դատարանն էլ ամփոփուեցին հարուստ քաղաքացիների սակաւաթիւ խմբակի ձեռքը։

Այս ինքնագլուխ գործունէութեան դէմ պայքարելու նպատակով, Ստեփանոս Բատորի թագաւորը (1576–1580) կեանքի կոչեց մի նոր հիմնարկութիւն՝ 40 այրեր (ordo quadraginta virorum), որոնց կէսը ընտրւում էր քաղաքի վաճառականներից, իսկ միւս կէսը՝ արհեստաւորներից։ Այս հիմնարկութիւնը եւ, ի մասնաւորի 40 այրերի ամէն տարի ընտրուող տեղակալը (regent), իրաւունք ունէր հակակշռի ենթարկելու քաղաքային վարչութեան հասոյթները եւ միջնորդ էր հանդիսանում քաղաքացիների ու քաղաքային վարչութեան միջեւ։ Տեղակալը յիշեցնում էր հռոմէական ժողովրդական տրիբունին։

Այս հիմնարկութիւնները ծառայում էին Լվով քաղաքի, գերազանցապէս լեհ, աւելի ճիշտ, կաթոլիկ ազգաբնակութեան առօրեայ կարիքներին։ Իսկ ինչ վերաբերում է Լվովում ապրող ուրիշ տարրերին, այսինքն՝ հայերին, ռուսիններին ու հրէաներին, ռուսինները ենթարկուած էին քաղաքային դատարանին, հրէաները՝ արքունական պաշտօնէից դատարանին, իսկ հայերը ունէին սեփական դատական հիմնարկութիւններ՝ բաղկացած հայ ժողովրդի աւագներից, որոնք ղեկավարում էին հայերի ներքին կեանքը եւ դատաստան էին անում։ Նրանց էին ենթակայ հայերի միջեւ ծագող բոլոր դատական գործերը, այլեւ հայերի եւ օտարների միջեւ առաջ եկած այն դատերը, երբ ամբաստանեալը հայ էր։

Հայ աւագները թուով 12 հոգի էին։ Նրանց գլուխ կանգնած էր վոյթը, որը սկզբում ընտրւում էր հայերի միջից եւ հայերի կողմից։ Արդէն ԺԴ դարի կէսերին պատահում են ցուցմունքներ, որ հայերն ունէին սեփական վոյթ, որը հայ ժողովրդի ինքնավարութեան պետն էր եւ հայերի ներկայացուցիչն ու պաշտպանն էր Լվովի քաղաքային եւ արքունական հիմնարկութիւնների առջեւ։